




ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ


ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

Բ. ՏԱՐԻ

ԳՐԵՑ

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ՄԼԽԻԹ. ՈՒՆԵԹԷ



Պ Լ Ո Վ Դ Ի Ի 1936

491.99-5

7-79

Գրիգոր Դավթի չի գրվում

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՍ 1961 թ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ


Բ. ՏԱՐԻ

ԳՐԵՑ

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՂԵԱՆ

ՄԽԵԹ. ՈՒԽՏԷ

73636



Պ Լ Ո Վ Դ Ի Ի 1936

3015 A

Ցպ. «ՆՈՐ ՏԱՌ» Պլովդիւ ուլ. Մաքիմ Կրաւէլ 97



A $\frac{\pi}{13106}$

ԵՐԿՈՒ ԻՍՍՖ





Աճխարհաբար Քերականութեան այս
Բ. Հատորիկը՝ շարունակութիւնն է Ա. Հատորի-
կին, որ անցեալ տարի լոյս տեսաւ:

Ա. Հատորին մէջ նկատի առած էինք
քերականութեան տարրական գիտելիքներէն Բա-
ռակագմութիւնը, Առողջանութիւնը, Տաղադար-
ձը, Ուղղագրութիւնը, Գոյականը՝ իր թիւով ու
հոլովով, Յօդը, Ածականը և Դերանունը: Իսկ
Բ. Հատորի մէջ պիտի աւանդենք Բայի եւ ա-
նոր Խնդիրներուն, Ենթակայի, Բայի համա-
ձայնութեան, Մակբայի, Նախադրութեան,
Շաղկապի, Չայնարկութեան, Ասորագելիի,
Յասկացուցիչ ~ Յասկացեալի եւ Կիսադրու-
թեան տարերքը: Այս Բ. Հատորով Ա. Հատո-
րը կ'ամբողջանայ եւ երկուքը միասին մեր Աշ-
խարհաբար Քերականութեան Ա. Մասը կը կազ-
մեն, որով քերականութեան տարրական գիտե-
տելիքները համառօտ՝ բայց լրիւ աւանդուած
կ'ըլլան:

Մայիս 1936

Հեղինակը





ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

Բ. ՏԱՐԻ

Ա. Դաս. — Բայ

1. Բայը ընել կամ ըլլալ կը ցուցնէ: Օրինակ. աշխատիլ, երգել. մեծնալ, ծերանալ:

2. Բայը ունի 1. եղանակ, 2. ժամանակ, 3. քիւ և 4. դեմք:

3. Եղանակը չորս է. 1. սահմանական, 2. ստորադասական, 3. հրամայական և 4. անորոշ եղանակ կամ դերբայ:

Ա. Ընթերցուած. — Անաստուկներուն օգտակարութիւնը

Բոլոր անասուններն օգտակար են մարդուն: Շունը կը պահէ տունը, կատուն մուկերը կը ջնջէ, կովը, այծն ու ոչխարը կաթ կու տան: Զին կառք կը քաշէ, Զորին ու էշը բեռ կը կրեն: Խոզը միս կու տայ: Սազը, բազն ու հաւը հաւկիթ կ'ածեն ու միս ու փետուր կու տան: Շատ մ'անասուններ ալ իրենց թանկագին մորթովը կամ միտովը օգտակար կ'ըլլան մարդուն:

ՀՐԱՆՈՒՄՆԵՐ

1. Օրինակեցե՛ք վերի ընթերցուածը և՛ ԲԱՅՆՐՈՒՆ ՏԱԿ ԴԻԾ ՔԱՇՆՅԵՔ:

2. Բերանացի մէյ մէկ ԽՕՄԲ ՇԻՆՆՅԵՔ հետեւեալ քայերով:

Գրեի, նուագեի, փորեի, դանեի, խօսիլ, սառիլ,
դանիլ, տանիլ, կարդալ, դառնալ, հաղալ, խաղալ,
առնուլ, թողուլ, դրօնուլ:

Օրինակ. ես դասս կը գրեմ:



Բ. Դաս. — Բային ժամանակը

4. Ժամանակը կը ցուցնէ թէ զործողու-
թիւնը ե՞րբ կ'ըլլայ:

5. Ժամանակը երեք է. ներկայ, ան-
ցեալ, ապառնի: Ներկայ է, երբ ըսեմ. հիմայ
կը գրեմ. անցեալ՝ երէկ գրեցի, ապառնի՝
վաղը պիտի գրեմ:

Բ. Ընթերցուած. — Հայրենի սնակս

Ի՞նչ կայ աւելի սիրելի, քան հայրենի տնա-
կը. փոքր է մեր դիւղը, աղքատ՝ մեր տնակը: Անոր
մէջ բնակող ծնողացս սրտերը սակայն դիս ջերմօ-
րէն կը սիրեն: Մեր տնակը՝ արեւու ճառագայթնե-
րէն կը լուսաւորուի. Խաղողի ողկոյղները՝ պատու-
հանէս ներս կը սողոսկին: Ծառերու փնջիկ մը չըր-
ջապատած է մեր տնակը, երկնքի թռչուններն են
տնակիս երգեցիկները: Թաղաւորի պալատին հետ
չեմ փոխեր հայրենի տնակս:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

3. Օրինակեցե՛ք վերի ընթերցուածը եւ ԲԱՅՆ-
ՐՈՒՆ ՏԱԿ ԴԻԾ ԲԱՇԵՑԷՔ:

4. Ըսե՛ք քե յաջորդ բայերէն ո՞րը ներկայ,
անցեալ, կամ ապառնի է:

Սենեակիս մէջ կ'ԱՇԽԱՏԻՄ. երէկ նամակ էմ-

ՏԱՅԱՅ: Շարաթ մը վերջ հայրս ՊԻՏԻ ԳԱՅ: Դուռն
դասող ՍՈՐՎԵՑԱՐ: Հօրեղբայրդ խանութ ԿԵՐԹԱՅ:
Մեր ձին ձեր կառքը ՊԻՏԻ ԲԱՇԷ:



Գ. Դաս. — Բային քիւր

Ն. Բային քիւր գործողութիւն ընողին մէկ
կամ աւելի ըլլալը կը ցուցնէ և երկու է. եղա-
կի և յոյնակի: Օրինակ. ես կը կարդամ (եղա-
կի), մենք կը կարդանք (յոյնակի). տղան կը
գրէ (եղակի), տղաք կը գրեն (յոյնակի):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

5. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԵԶԱԿԻ ԲԱ-
ՅԵՐԸ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Մեղուն ծաղիկներուն հիւթերը կը ծծէ, վա-
ռարանին ծուխը օդը կը բարձրանայ: Տղաք պտոյտի
զացին: Գնդակը կորսուեցաւ: Սաթենիկ ծանեակ կը
հիւսէ: Շօգեկառքին կաթսան պայթեցաւ: Սեւ Ծովը
յաճախ կ'ալիկոծի Առիւծը վազրին թշնամին է:
Խնչ կ'ընես, աղա՛յ:

6. Բերանացի ՅՈՒՆԱԿԻ ԸՐԷՔ հետեւեալ խօսքերը:
Արծիւը կը սաւառնի: Գետը կը յորդի: Ես կը
գծեմ: Աղաւնին կը մնչէ: Հրդեհը կը ծաւալի: Զիւ-
նը կը հալի: Տղան կու լայ: Մայրիկը կ'աղօթէ:

Օրինակ. Արծիւները կը սաւառնին:



Գ. Դաս. — Բային դէմք

Ն. Բային դէմք կը ցուցնէ թէ գործողու-
թիւնը ո՞ր անձը կ'ընէ:

8. Դէմքը երեք է.

Եզակի

Ա. դեմք Ես կը գովեմ
 Բ. դեմք Դուն կը գովես
 Գ. դեմք Ան կը գովե

Յոճմակի

Մենք կը գովենք
 Դուք կը գովեք
 Անոնք կը գովեն.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

7. Գրեցեք վարի խօսքերը եւ ԲԱՅՅԵՐՈՒՆ Ա. ԴԵՄՔԵՐԸ (ԵԶԱԿԻ ԵՒ ՅՈՅԴԱԿԻ) usnorագեցեք.

Ես էի կեանքդ ազատողը: Ան ալ իր պաշտօնէն ինկաւ: Դուն ես՝ որ պիտի գայիր, Դուք ե՛րբ ճամբայ պիտի հլլէք: Մենք արդէն տեսած ենք այդ բաները: Ինքն էր, որ կ'ըսէր թէ հոս չի դանուիր: Իրենք ալ չեն գիտեր թէ ի՞նչ պիտի ընեն: Ես արդէն ըսի ձեզի՝ Մենք չառ յորդորեցինք, բայց չհամոզուեցաւ:

8. Բերանացի ըսեք թե յաջորդ խօսքերուն վեջ Ո՞Ր ԴԵՄՔԵՐԸ կան:

Դուն կը զբօսնուս: Մենք կ'աշխատինք: Ես կը կարէի: Ան կ'երթայ, Դուք եկէք, Ենոնք կը ճաչեն: Ինքը կը խօսի: Վաղը պիտի մեկնիմ: Քիչ առաջ կու լայիր: Այսօր կը գրեն:



Ե. Դաս. -- Բայերուն լծորդութիւնը

9. Բայերուն փոխուելուն խոնարհում կ'ըսենք:

10. Բայերը տեսակ տեսակ խոնարհումներ ունին, որոնց կ'ըսենք լծորդութիւն: Օրինակ. երգել՝ կ'ըլլայ երգեցի, խօսիլ՝ կ'ըլլայ խօսեցայ, կարգալ՝ կ'ըլլայ կարգացի:

11. Լծորդութիւնները՝ բայերուն աներեւոյթ ժամանակին վերջաւորութենէն կ'որոշուին

և երեկ էն.


Առաջին՝ - եղ օրինակ. զրեղ
երկրորդ՝ - իղ " սորվիղ
երրորդ՝ - աղ " խաղաղ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

9. Օրինակեցեք վարի խօսքերը և ԲԱՅԵՐՈՒՆ
ՎՐԱՅ Ա. Բ. Գ. ՈՎ ՆՇԱՆԱԿԵՑԷՔ ԹԷ ՔԱՆԵՐՈՐԴ
ԼՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԿԸ ՎԵՐԱԲԵՐԻՆ:

Մարդը կրնայ խօսիլ, կարգալ, զբնլ, մտածել,
պոռալ, երգել, աշխատիլ, Առիւծն ու վագրը կըր-
նան մոռնիլ: Գայլերը կրնան ոռնալ: Շները կրնան
հաջել: Կատուները կրնան մլաւել ու նսւալ: Մե-
ղսւն կրնայ բզզալ: Եզն ու կովը կրնան բառաչել:
Խոզը կրնայ խանչել: Ջին կրնայ խխնջել: Էշը
կրնայ զոալ:

10. Գտեք մեյ մեկ բայ ա. բ. գ. լծորդութեան
սակ գացող:



2. Դաս.— Էական բայ

12. Էական բայը ըլլալ կը ցույցնէ և միւս
բայերուն հիմը կամ արմատն է:

13. Էական բայը սահմանական ներկայի
եւ անկասարի մէջ երկու ձեւ ունի և հետեւ-
եալն է.

Սահմանական եղանակ

Ներկայ Ա. Ձեւ

Եզակի

Յոյնակի

Ես եմ

Մենք ենք

Դուն ես

Դուք էք

Ան է

Անոնք են

Ներկայ Բ. Ձեռ

Եզակի	Յոֆնակի
Կ'ըլլամ	Կ'ըլլանք
Կ'ըլլաս	Կ'ըլլաք
Կ'ըլլայ	Կ'ըլլան

Անկասար Ա. Ձեռ

Եզակի	Յոֆնակի
Ես էի	Մենք էինք
Դու էիր	Դուք էիք
Ան էր	Անոնք էին

Անկասար Բ. Ձեռ

Եզակի	Յոֆնակի
Կ'ըլլայի	Կ'ըլլայինք
Կ'ըլլայիր	Կ'ըլլայիք
Կ'ըլլար	Կ'ըլլային

Կասարեալ

Եզակի	Յոֆնակի
Եղայ	Եղանք
Եղար	Եղաք
Եղաւ	Եղան

Աստուծի

Եզակի	Յոֆնակի
Պիտի ըլլամ	Պիտի ըլլանք
Պիտի ըլլաս	Պիտի ըլլաք
Պիտի ըլլայ	Պիտի ըլլան

Անկասար աստուծի

Եզակի	Յոֆնակի
Պիտի ըլլայի	Պիտի ըլլայինք
Պիտի ըլլայիր	Պիտի ըլլայիք
Պիտի ըլլար	Պիտի ըլլային

ՀՐԱՀԱՆԳ

11. Օրինակեցիք հետևեալ խօսքերը՝ ԷԱԿԱՆ
ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵԼՈՎ:

Ան գիտնական մարդ մըն է: Ատոնք չատ ազ-
նիւ են: Հայրդ մշակ էր: Երէկ քաղաքին պար-
տէզը դացեր էին: Նոր հազուստէդ գոհ եղա՞ր: Քիչ
մնաց դուք ալ հիւանդ կ'ըլլայիք: Հինգ տարիէն
չբջանաւարա կ'ըլլաս: Եթէ հոս չգայիք՝ հիմայ ո՛ւր
պիտի ըլլայիք: Այսօր ժամը երեքին Պարիս պիտի
ըլլայի: Բայց՝ պիտի չըլլամ:



Է. Դաս. — Էական բայ (շարունակութիւն)

Ստորագասական եղանակ

Ներկայ

Եզակի	Յոֆնակի
Ըլլամ	Ըլլանք
Ըլլաս	Ըլլաք
Ըլլայ	Ըլլան

Անկատար

Եզակի	Յոֆնակի
Ըլլայի	Ըլլայինք
Ըլլայիք	Ըլլայիք
Ըլլար	Ըլլային

Հրամայական եղանակ

Եզի՛ր	Եզէ՛ք
Անուո՛ւ Եղանակ (զերբայ)	
Անեղեռոյ՛ր	
Ըլլա՛ւ	

Ընդունեցուք ինն ներկայ

Եղող

Ընդունեցուք ինն անցեալ

Եղած, եղեր

Ընդունեցուք ինն ապառնի

Ըլլալու, Ըլլալիք

ՀՐԱՀԱՆԳ

12. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԷՍԿԱՆ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Եթէ ազնիւ ու բարի բլլաք՝ ամէն մարդէ
կը սիրուիք: Երանի թէ ամէն մարդ այդպէս բլ-
լար: Վաղը ժամը ութին հոս եղէք: Կրնա՞ն պա-
տուաւոր բլլալ. ամէնուն վստահութիւնը կը գրա-
ւեալ: Հիւանդ եղող մարդը՝ կ'երթայ կը պառկի: Հա-
զիւ չըջանաւարաւ եղած՝ մեկնի՞ր կ'ուզեալ: Տղա՛ն,
համարտասէր եղիր: Եթէ այդ բարձունքէն իյնայիր՝
կտոր կտոր կ'ըլլայիր:



Ը. Դաս.— Առաջին լծողութիւն — Ե՛՛՛

15. Առաջին լծողութեան տակ կ'երթան
ե՛լ վերջացող բայերը, որոնք հետեւեալ կեր-
պով կը խոնարհին:

Սահմանական եղանակ
Ներկայ

Եզակի

Յո՛հնակի

Կը գրեմ

Կը գրենք

Կը գրես

Կը գրէք

Կը գրէ

Կը գրեն

Անկասար

Եզակի -	Յոֆնակի
Կը գրէի	Կը գրէինք
Կը գրէիր	Կը գրէիք
Կը գրէր	Կը գրէին

Կասարեալ

Եզակի	Յոֆնակի
Գրեցի	Գրեցինք
Գրեցիր	Գրեցիք
Գրեց	Գրեցին

Ապառնի

Եզակի	Յոֆնակի
Պիտի գրեմ	Պիտի գրենք
Պիտի գրես	Պիտի գրէք
Պիտի գրէ	Պիտի գրեն

Անկասար ապառնի

Եզակի	Յոֆնակի
Պիտի գրէի	Պիտի գրէինք
Պիտի գրէիր	Պիտի գրէիք
Պիտի գրէր	Պիտի գրէին

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ


13. Օրինակեցեմ հետեւեալ խօսքերը եւ Ա.
ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ (1) ԲԱՅԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԷՔ:
Երկու ժամէ ի վեր քեզի կը սպասեմ, Տղայ մը
գետէն ազատեցինք, Չարագործները կը բռնեն ու

1) Բայի մը ո՛ր շփոթողութեան տակ երբայն ի-
նքեանս համար՝ պէտք է բային աներեւոյթը գտնել:

շղթայով կը կապեն: Մրցումի համար երկու հոգի
միասին կը վազէին: Զքեղ հոս կանչեցինք, վասն զի
խնձոր պիտի քաղենք: Տակառները երէկ պիտի
պարպէինք: Տաք օդերուն շատ ջուր կը խմենք:
Ինձմէ ի՞նչ կ'ուզես:

14. Բերանացի խոնարհեցե՛ք վարի քայերուն
ՆԵՐԿԱՆ, ԿԱՏԱՐԵԱԼՆ ՈՒ ԱՊՍՌՆԻՆ:

Խմել, ժողվել, գովել, կանչել, երգել, հանել, ձգել:



Թ. ԴԱՍ. — Ա. ԼԺՈՐԴՈՒ ՔԻՆ (շարունակու-
թիւն)

ՍՏՈՐԱՊԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի	Յոֆնակի
Գրեմ	Գրենք
Գրես	Գրէք
Գրէ	Գրեն

Անկասար

Եզակի	Յոֆնակի
Գրէի	Գրէինք
Գրէիր	Գրէիք
Գրէր	Գրէին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Գրէ՛ Գրեցէ՛ք

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ (գերբայ)

Աներեւոյթ

Գրել

Ընդունելութիւն ներկայ

Գրող

Ընդունելութիւն անցեալ

Գրած, Գրեք

Ընդունելութիւն ապառնի

Գրելու, Գրելիք

ՀՐԱՀԱՆԳ

15. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ Ա. ԼԾՈՐ-
ԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՍՏՈՐԱԴԱՍՍԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱ-
ԿԱՆ ՈՒ ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Ոտքէ՛ն, լաւ կ'ըլլայ որ այսօր նամակդ գրես:
Եթէ ուզէ՛իք կրնայիք բռնել թիթեռնիկը՝ վազէ՛,
հո՛ս կանչէ եղբայրդ: Ի՞նչպէս եղաւ որ այդքան
խմող եղար: Տակառին ջուրը պարպեր ու մէջէն
քարերը հաներ եմ: Եթէ գինքը գովեմ՝ կը չփանայ:
Ձեռքէ՛ ձեռք բռնեցէ՛ք: Զքեզ ազատիլ չեմ կրնար:
Թէ՛ խմող ես եւ թէ՛ կ'ուրանաս: Գրած ատեն՝ չի-
տակ բռնէ գրիչը:



Ժ Դաս. — Երկրորդ Լծորդութիւն - Ի՛

17. Երկրորդ Լծորդութեան տակ կ'երթան
Ի՛, վերջացող բայերը, որոնք հետեւեալ կեր-
պով կը խոնարհին:

Սահմանական եղանակ

Ներկայ

Եզակի

Յոփնակի

Կը սորվիմ

Կը սորվինք

Կը սորվիս

Կը սորվիք

Կը սորվի

Կը սորվին

Անկասար

Եզակի	Յոֆնակի
Կը սորվէի	Կը սորվէինք
Կը սորվէիր	Կը սորվէիք
Կը սորվէր	Կը սորվէին

Կասարեաշ

Եզակի	Յոֆնակի
Սորվեցայ	Սորվեցանք
Սորվեցար	Սորվեցաք
Սորվեցաւ	Սորվեցան

Ապառնի

Եզակի	Յոֆնակի
Պիտի սորվիմ	Պիտի սորվինք
Պիտի սորվիս	Պիտի սորվիք
Պիտի սորվի	Պիտի սորվին

Անկասար ապառնի

Եզակի	Յոֆնակի
Պիտի սորվէի	Պիտի սորվէինք
Պիտի սորվէիր	Պիտի սորվէիք
Պիտի սորվէր	Պիտի սորվէին

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

16. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ Բ. ԿԾՈՐ-ԴՈՒԹԵԱՆ ԲՍՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Մենք քաղքին մեծ փողոցին մէջ կը բնակինք, Շատ հաւնեցան ձեր այդ վարմունքին: Ծառին տակ կը նստեցանք ու խօսեցանք: Քիչ առաջ ո՞ւր կը նայէիր: Հիմայ դո՛ւք պիտի աշխատէր: Երկար պիտի ապրէիր, եթէ ժուժկալ ըլլայիր: Զմեռը ցրտէն կը սառնէինք, ինչո՞վ սառեցար սառոյցին վրայ: Ո՛չ թէ սառեցայ, այլ ցրտէն սառեցայ:

17. Բերանացի խոնարհեցե՛ք յաջորդ քայերուն
ՍՍ.ՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ,

Պառկել, նայել, հաւնել, խորհել, նստել, սառել:



ԺԱ. Դաւ. — Երկրորդ լծորդութիւն
(շարունակութիւն)

18. Ստորադասական եղանակ

Ներկայ

Եզակի

Յոֆնակի

Սորվիմ

Սորվինք

Սորվիս

Սորվիք

Սորվի

Սորվին

Անկասար

Եզակի

Յոֆնակի

Սորվէի

Սորվէինք

Սորվէիր

Սորվէիք

Սորվէր

Սորվէին

Հրամայական եղանակ

Սորվէ՛

Սորվեցէ՛ք

Անորոշ եղանակ (դերբայ)

Անկերեւոյթ

Սորվի

Ընդունելութիւն ներկայ

Սորվող



9013106
A
5566

Ընդունեցուք ինձ անցեալ
 Սորված, Սորվեք
 Ընդունեցուք ինձ ապառնի
 Սորվեալ, Սորվելիք
 ՀՐԱՀԱՆԴ

18. Օրինակեցե՛ք վարի խօսքերը՝ Բ. ԼՆՈՐ-
 ԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱ-
 ԿԱՆ ՈՒ ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵԼՈՎ:

Եթէ հաւնիք՝ նորէն կը բերեմ, Թէ որ երկար
 ապրիս՝ չառ բան պիտի տեսնես: Թող աշխատէին
 որ անօթի չմնային: Նստէ՛, աշխատէ՛: Պէտք է
 յոգնիլ՝ հանդստանալու համար: Եթէ սա պտուղնե-
 րուն հաւնող կայ՝ թող նստի ուտէ: Քրտնած ատեն
 ջուր մի՛ խմէք: Մինչեւ հիմայ ո՛րքան մարդիկ են
 ապրեր ու մեռեր:

ԺԲ. Դաս.— Երրորդ լծողութիւն — ԱԼ

19. Երրորդ լծողութեան բայերը աներեւ-
 լոյթի մէջ — ԱԼ կը վերջաւորին և հետեւեալ
 կերպով կը խոնարհին.

Սահմանակա՛ն եղանակ
 ներկայ

Եզակի

Յո՛հնակի

Կը խաղամ

Կը խաղանք

Կը խաղաս

Կը խաղաք

Կը խաղայ

Կը խաղան

Անկասար

Եզակի

Յոֆնակի

Կը խաղայի

Կը խաղայինք

Կը խաղայիր

Կը խաղայիք

Կը խաղար

Կը խաղային

Կասարեալ

Եզակի

Յոֆնակի

Խաղացի

Խաղացինք

Խաղացիր

Խաղացիք

Խաղաց

Խաղացին

Ապառնի

Եզակի

Յոֆնակի

Պիտի խաղամ

Պիտի խաղանք

Պիտի խաղաս

Պիտի խաղաք

Պիտի խաղայ

Պիտի խաղան

Անկասար ապառնի

Եզակի

Յոֆնակի

Պիտի խաղայի

Պիտի խաղայինք

Պիտի խաղայիր

Պիտի խաղայիք

Պիտի խաղար

Պիտի խաղային

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

19. Օրինակեցիք հետեւեալ խօսքերը՝ և Գ. ԼԷ. ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԷՔ:

Ինչ տեսակ գիրք կը կարդաս՝ ա՛յն տեսակ մարդ ես: Պիտի ջանամ միշտ ճշդագոյն մնալ: Լաւ խաղացիք: Հիմայ ալ աշխատեցէք: Աստուծոյ ջաղացքները կամաց՝ բայց լաւ կ'աղան, կ'ըսէ գերմանական առածը, Հոս պիտի մնայիք, վասն զի այդ-

պէս կը բաղձայինք: Շատ յուսացին որ իրենց վերայ պիտի խղճանք: Ինչո՞ւ այդքան կը պոռաք: Ինչո՞ւ պիտի պոռայի, եթէ պատճառ չըլլար:

20. Բերանացի խոնարհեցիք յաջորդ բայերուն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ:

Հաղալ, լուալ, կարդալ, հաւատալ, անսալ, ջանալ



ԺԳ. Դաս.— Երրորդ լծորդութիւն
(շարունակութիւն)

20. Ստորագասական եղանակ

Ներկայ

Եզակի	Յոֆնակի
Խաղամ	Խաղանք
Խաղաս	Խաղաք
Խաղայ	Խաղան

Անկատար

Եզակի	Յոֆնակի
Խաղայի	Խաղայինք
Խաղայիք	Խաղայիք
Խաղար	Խաղային

Հրամայական եղանակ

Խաղա՛	Խաղացէ՛ք
-------	----------

Անորոշ եղանակ (դերբալ)
Անեղեւոյթ
Խաղալ

Ընդունեցուք իւն ներկայ

Խաղացող

Ընդունեցուք իւն անցեալ

Խաղացած, խաղացեր

Ընդունեցուք իւն ապառնի

Խաղալու, խաղալիք

ՀՐԱՀԱՆԳ

21. Գրեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Գ. ԼՅՈՐ-
ԴՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՈՒ Ա-
ՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Եթէ ջանաս՝ դիւրին է ամէն բան: Խղճացէ՛ք
աղքատներուն: Երանի՛ թէ հոս մնայի՛ք: Ամէնքն
ալ սկսան հազալ: Յուսացող մարդը՝ պիտի չամչնայ:
Ամբողջ ցօրենն աղացեր է: Ծնողքիդ անսա՛: Թող
կարդայի՛ք, ինչո՞ւ խաղացի՛ք: Չեմ կրնար հոս մը-
նալ, ի՞նչ կը խոկաս:



ժ.Գ. Դաս.— Ա. լծորդութեան զարսու-
ղիները

21. ԳՏՆԵԼ, ՏԵՍՆԵԼ, ՊԱԳՆԵԼ, ՄՏՆԵԼ, ԵԼ-
ԼԵԼ (ԷԼՆԵԼ), ԹՔՆԵԼ, ՀԵԾՆԵԼ, ԽԱԾՆԵԼ, ԻՋՆԵԼ (ԻՋ-
նալ), բայերը Ա. Լծորդութեան սակ կ'երթան, սա-
կայն Կասարեալի, Հրամայականի եւ Ընդունեցուք իւն
Անցեալի մէջ կը զարառուղին ու կ'ըլլան. Կառարեալ՝
ԳՏԱՅ, ՏԵՍԱՅ, ՊԱԳԱՅ, ՄՏԱՅ, ԵԼԱՅ, ԹՔԱՅ, ՀԵԾԱՅ,
ԽԱԾԱՅ, ԻՋԱՅ. Հրամայական՝ ԳՏԻՐ, ՏԵ՛Ս, ՊԱ՛Գ,
ՄՏԻՐ, Ե՛Լ, ԹՔԻՐ, ՀԵԾԻՐ, ԽԱ՛Ծ կամ ԽԱԾԷ՛, ԻՋԻՐ.
Ընդունելութիւն Անցեալ. ԳՏԱԾ, ՏԵՍԱԾ, ՊԱԳԱԾ,

ՄՏԱԾ, ԵԼԱԾ, ԹՒԱԾ, ՀԵԾԱԾ, ԽԱԾԱԾ, ԻՋԱԾ.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

22. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Ա. ԼԸ-ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ.

Երէկ կենդանաբանական պարաէզը տեսանք: Վերադարձի՛ս՝ ղեկեցիկ մանեակ մը դառայ. Հայաստանի մէջ՝ նորահարսը մեծ ու փոքր խնամիրներուն ձեռքերը կը պաղնէր: Խնդրեմ, նե՛րս մաէք: Ձեզմէ ս՞ղ ելած է Մասիսի դազաթը, Անկլթիսթիւն է փողոցը թքնել: Նախ տե՛ս, ապա զարմացիր: Դեռ այս դռնէն ներս չեմ մտած: Բարձրութենէդ վա՛ր իջիր:

23. Բերանացի խոնարհեցե՛ք վարի բայերը.

Մանել, տեսնել, գտնել, թքնել, հեծնել, խածնել:



ԺԵ. Դաս.— Բ. Լծորդութեան զարտոնիւնները

22. ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ զարտոնիւններն են.

ՀԱՄԵՒԼ, ԱՆՑՆԵՒԼ, ՄԵՌՆԵՒԼ, ԵՆԱՆԵՒԼ, ՀԱՏՆԵՒԼ, ՀԱԳՆԵՒԼ և ԶԻԼ վերջացողները. ԹՌԶԻԼ, ՓԱԽԶԻԼ, ևն, որոնց կառաքեալը կ'ըլլայ. ՀԱՍԱՅ, ԱՆՑԱՅ, ՄԵՌԱՅ, ԹՌԱՅ, ՓԱԽԱՅ ևն, Հրամայականը՝ ՀԱՍԻՐ, ԱՆՑԻՐ, ԹՌԻՐ ևն. Ընդունելութիւնն Անցեալը՝ ՀԱՍԱԾ, ԱՆՑԱԾ, ԹՌԱԾ, ևն.

23. ՍԿՍԻԼ, ՓՐԹԻԼ, ՊՐԾԻԼ բայերը միա՛յն կասարեալի մէջ զարաւղի են և կ'ըլլան. ՍԿԱՅ, ՊՐԾԱՅ, ՓՐԹԱՅ.

24. ՆՍՏԻԼ՝ կառաքեալը կ'ըլլայ՝ ՆՍԱՅ և ՆՍՏԵՑԱՅ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

24. Օրինակեցե՛ք յաջորդ խօսքերը եւ Բ. ԼԸ-

ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՐՏՈՒՂԻ ՔԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Մեռած մարմինը դիակ կ'ըսուի: Այդքան շո՞ւա մեռաւ: Առիւծը զոռադեղէն (վանդակէն) փախած է: Հասի՛ր ու անցի՛ր ամէնքը: Երկրաշարժէն շատ տներ փլան: Ծնած մարդիկ աւելի շատ են՝ քան մեռած մարդիկ: Հագէ՛ք ձեր համազգեստները: Երկրին դըրամը հատաւ: Օդապարիկով տասնուվեց հազար մեւորը բարձր թռաւ Պիկկարտ: Առտու սկսայ դասս սորվիլ: Լեռնէն քար մը փրթաւ: Անսր ձեռքէն պրծաք:

25. Բերանացի խոնարհեցե՛ք հեճեճեալ բայերը: Դպչիլ, բռննիլ, փախչիլ, սկսիլ, պրծիլ:



ԺԶ. ԴԱՍ. — Դ. լԺՈՐԴՈՒԹԵԱՆ զԱՐՏՈՒՂԻՆԵՐ

25. ՆԱԼ վերջացող բայերը Դ. լԺՈՐԴՈՒԹԵԱՆ տակ կ'երթան, բայց ԿԱՏԱՐԵԱՂԻ, ՀՐԱՄԱՅԱԽԱՆԻ ԵՒ ԸՆԴՈՒՆԵՂՈՒՅԻՆ ՆԵՐԽԱՅԻ ԵՒ ԱՆԳԵԱՂԻ մէջ Ն գիրը կ'ը կՈՐՄՆՑՆԵՆ ԵՒ կը զարտուղին: Օրինակ. Մոռնալ՝ կ'ըլլայ ՄՈՌՑԱՅ, ՄՈՌՑԻՐ, ՄՈՌՑՈՂ, ՄՈՌՑԱԾ:

26. Այսպէս կը խոնարհին նաեւ. իմանալ, ճանչնալ, գիտնալ, գողնալ, վախնալ, կեճնալ, արջնալ, տախնալ, մօտենալ, հասկնալ, եւ այլն: Դառնալ, բառնալ, հաւրառնալ բայերուն Կատարեալը կ'ըլլայ. ԴԱՐՁԱՅ, ԲԱՐՁԱՅ, ՀԱՄԲԱՐՁԱՅ:

27. ՈՒԼ կամ ՆՈՒԼ վերջաւորութեամբ քանի մը բայ ալ կայ, որոնք երեք լԺՈՐԴՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ տակ չեն երթար եւ կ'ես ձը զարտուղի եւ: Օրինակ. Թողոր, Կատարեալ՝ ԹՈՂԻ, կամ ԹՈՂՈՒՑԻ. Հրամայեալ՝ ԹՈՂ, ԹՈՂԷՔ կամ ԹՈՂՈՒՑԷՔ, Ընդ. Անց. ԹՈՂԱԾ կամ ԹՈՂՈՒՑԱԾ, ԹՈՂԵՐ կամ ԹՈՂՈՒՑԵՐ:

ՀՐԱՀԱՆԳ

26. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Գ. ԼԸ-ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՐՏՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԷ՛Ք:

Եթէ չա՛ր զործած ես՝ ամէցի՛ր, Զձեզ չճանչցայ. ո՛րքան փոխուեր էք: Լաւ դիտցած բանը մարդ դիւրաւ չի մոռնար: Զեռնուելոյն ետ դարձան: Հոս կեցի՛ր ու տաքցի՛ր: Ինչո՞ւ համար այդքան վախցար: Զատկի տօնը մօտեցած էր, երբ Յեսուս Երուսաղէմ մտաւ: Կողերը ձիերը զողցան ու զային: Եթէ հասկցար՝ մօտեցէ՛ք իրեն և բռնէ՛ք զայդ:



ԺԷ. Դաս.— Անկանոն բայեր

28. ԱՆԿԱՆՈՆ կ'ըսուին ա՛յն բայերը, որոնք երեք կանոնաւոր շփոթողութիւններէն ոչ մեկուն կը հետեւին եւ կ'ստաւեալի, Հրամայականի եւ Ընդունեցողութիւն Անցեալի մեջ անկանոն ձեւեր ունին: Օրինակ. Բերե՛լ, Կատարեալի մէջ չ'ըլլար բերե՛ծ, կ'ըլլայ բերի. Հրամայականը կ'ըլլայ՝ Բե՛ր (և ոչ Բերէ):

29. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՆ են. ԲԵՐԵԼ, ԸՍԵԼ, ԸՆԵԼ, ԴԵԼ, ԶԱՐՆԵԼ, ՈՒՏԷԼ, ՏԵՍՆԵԼ, ՏԱՆԻԼ, ԲԱՆԱԼ, ԻՅՆԱԼ, ԵՐԹԱԼ, ԼԱԼ, ԳԱԼ, ՏԱԼ, ԱՌՆՈՒԼ:

30. ԳԱԼ, ԼԱԼ, ՏԱԼ, Սահմանական Ներկայի և Անկատարի մէջ ԿԸ ի տեղ ԿՈՒ կ'առնուեն. Օրինակ. ԿՈՒ դամ, ԿՈՒ տայ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

27. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԱՆԿԱՆՈՆ ՔԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԻԾԵՑԷ՛Ք:

Որսօրդ ա՛նտառ գնաց, որս մը զարկաւ ու


տուն բերաւ: Մինչեւ հիմայ ի՞նչ ըրիր: Ա՛ռ սա
դլխարկը գլուխդ դիր: Բանան կերած էք: Տղա՛յ,
ինչո՞ւ կու լաս: Ժամը քանիի՞ն դպրոց եկար: Չը-
լացող աղուն կաթ չեն տար: Սղախինը դուռը բա-
նալով ըսաւ՝ թէ տէրը տունը չէ: Սաւառնակը երեք
հազար մետր բարձրութենէն վար ինկաւ ու ջախ-
ջախուեցաւ:

28. Բերանացի խոնարհեցե՛ք վարի քայերուն
ԿԱՏԱՐԵԱԼՆԵՐԸ:

Երթալ, ընել, դնել, առնուլ, ուսել:

29. Բերանացի խոնարհեցե՛ք վարի քայերուն
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՆ:

Դալ, լալ, տալ:



ԺԸ. Դաւ. — Ենթակայ

31. ԵՆԹԱԿԱՅ Կ'ըսուի խօսքի մէջ գործողու-
թիւն կատարողը: Օրինակ. Ժիրայր նամակ կը գրէ.
այս խօսքին մէջ Ժիրայր գործողութիւն կատարող
ու ենթակայ է:

32. ԵՆԹԱԿԱՅ Կրնայ ըլլալ ԱնՈՒՆ մը կամ
ԴԵՐԱՆՈՒՆ մը: Օրինակ. ՍԱՐԳԻՍ Կ'աշխատի. ԵՍ
Կ'աշխատիմ:

33. Ենթական միշտ ՈՒՂՂԱԿԱՆ հսկով կ'ըլլայ:

34. Ենթական կը գանուի Ո՞Վ հարցումը ընե-
լով: Օրինակ. Մայրը իր զաւակը կը սիրէ. ո՞վ կը
սիրէ իր զաւակը — ՄԱՅՐԸ (ենթակայ):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

30. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԵՆԹԱԿԱ-
ՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԻՇԵՑԻՔ:

Արտաշէս թագաւոր է: Ս. Սահակ կաթողիկոս

եղաւ: Ս. Ներսէս Շնորհալի շատ մը հոգեւոր երգեր գրած է: Վաղարշապատ՝ Հայերու մայրաքաղաքն էր: Հայրը կ'աշխատի զաւակներուն համար: Տղաք իրենց դասերը կը սորվին: Զորին ուժեղ ու անվախ գրաստ մըն է: Դուք վարժարանին պատիւ կը բերէք: Ինքը կը շահի՝ ինքը կ'աւաճէ, Ասիոյ բնակչութիւնը՝ եւրոպայի բնակչութեան կրկինն է: Մեր դասարանին առաջին աշակերտը՝ Յակոբն է:

31. Յաջորդ քայերուն մէջ մէկ ենթակէ՛ց՝
գտէ՛ք եւ խօսք շինեցէ՛ք:

Սիրել, վառել, նստիլ, լուսաւորել, մարել, խմել, քնանալ, գալ, սառիլ, կարգալ, երգել, ցատկել, մոնչել:

Օրինակ. ես ծնողս կը սիրեմ:



ԺԹ. Դաս. — Ներգործական բայ

35. ՆԵՐԴՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ կ'ըսուին ա՛յն բայերը, որոնց եւրախան գործադրելունը ուրիշի մը վրայ կը կատարէ: Օրինակ. Մայրը իր զաւակը կը սիրէ. կատուն մուկ մը քոնեց:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

32. Օրինակեցիք հետեւեալ խօսքերը եւ ՆԵՐԴՈՐԾԱԿԱՆ ԲԱՅՆԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԷՔ:

Հացագործը հաց կ'եփէ: Մասվաճառը հորթ մը ծախեց: Տղաք զնդակ խաղացին: Աղքատը դռնէդ մի՛ վռնաւ: Սա պտուղներուն համն առէք: Անասունները մի՛ ծեծէք: Բաժակը լեցուր ու խըմէ՛ք: Փոքր անասունները կը սիրեմ: Փութաջան աշակերտը՝ ժամանակը պարապ չ'անցներ:

33. Գտէ՛ք մէջ մէկ ՆԵՐԴՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ եւ խօսք

շինեցեք:

Օրինակ. Ձարդել — փայտ կը ջարդեմ:



Ի. Դաս. — Ձեզոք բայ

36. ՁԷՁՈՒՔ ԲԱՅԵՐԸ անո՞նք են, որոնց ենթական զործողութիւնը ինքնիր վրայ կամ ինքնիրեն կը կատարէ:

Օրինակ. Կերքամ, կը ֆնանամ: Մարդը իր անկողնոյն մէջ մեռաւ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

34 Դրեցեք վարի խօսքերն ու ՁԷՁՈՒՔ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԵՔ:

Մարդիկ սովորաբար մինչեւ եօթանասուն տարի կ'ապրին: Հայաստանի մէջ քանի՞ ամիս մնացիք: Սոսկ ժարդը՝ չուտով չի յոգնիր: Մարդը՝ իր կեանքին երրորդ մասը պառկելով ու քնանալով կ'անցնէ: Սոսու ժամը չինդին կ'արթննամ, վաղը ինքնաշարժով պտոյտի պիտի երթանք: Եթէ ամէն օր ժամ մը քալես՝ առողջ մարդ կ'ըլլաս:

35. Դեհեք մեյ մեկ չեզոք բայ ու ԽՈՆՍՐՀԵՑԵՔ ՁԱՆՈՆՔ:

36. Բերանացի ըսեք քե յաջորդ բայերէն Ո՞ՐԸ ՁԷՁՈՒՔ եւ Ո՞ՐԸ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ Է:

Դառնալ, առնուլ, յօրանջել, խնդալ, լալ, տալ, աղալ, ծռիլ, նստել, ցատկել, վառիլ, թափել:



ԻԱ. Դաս.— Կրօնօրական բայ

37. ԿՐԱԽՈՐԱԿԱՆ Կ'ըսուին ա'յն բայերը, որոնց գործողութիւնը՝ ուրիշի վր եկեղեցական վրայ կը կատարուի Օրինակ. Ծեծուիլ, սիրուիլ, աննշանուիլ. Տղան ծնողքէն կը սիրուի. Բարի մարդը դիւրաւ կը աննշանուի:

38. ԿՐԱԽՈՐԱԿԱՆ բայերը աներեւոյթի մէջ ՈՒԻԼ կը վերջանան.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

37. Օրինակեցեք հետեւեալ խօսքերն ու ԿՐԱԽՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Ծոյլ ու անկարգ աշակերտը՝ վարժարանէն կը վտարուի: Բարի ու փութաջան ուսանողն ալ ամէնքէն կը սիրուի ու կը գովուի. Բարեգործութիւնները դիւրաւ չեն մոռցուիր: Հիւանդները պէտք են խնամուիլ. Պաղ ջրով լուացուող մարդն աւելի արթուն կ'ըլլայ: Ամէն ծածուկ բան օր մը պիտի յայտնուի: Փոքր անասունները՝ մեծերէն կ'ուսուին: Լաւ աշակերտը կը վարձատրուի: Այսօր ձանձրոյթէն սիրտս կը նեղուի:

38. Ըսեք քե վարի բայերէն որո՞նք կրաւորական, ներգործական կաւ չեզոք են:

Ամբաստանուիլ, ծակել, իջնալ, քաղել, ծածկուիլ, մաղել, մարել, մկրտել, սպաննուիլ, սուրալ, փորել, քրանիլ, երգել, տալ, մեռնիլ



ԻԲ. Դաս.— Անցողական բայ

39. ԱՆՑՈՂԱԿԱՆ Կ'ըսուին ա'յն բայերը, որոնց երթական՝ գործողութիւնը ուրիշի վր ընել կու տայ: Այսպէս. Ճանչցնել, կերցնել, կարել տալ: Զգեստը

կարեղ տուր:

40. Ներգործական քայերուն վրայ — ՅՆԵԼ Մաս-
նիկն աւելցնելով անցողական կ'ըլլան: Օրինակ.
Սորվիլ, սորվեՅՆԵԼ, հաւնիլ, հաւնեՅՆԵԼ:

41. Ներգործական քայերէն Մասմը՝ ՅՆԵԼ Մաս-
նիկին տեղ՝ ՏԱԼ բայով անցողական կ'ըլլայ: Օրինակ.
Կարեղ ՏԱԼ, մաքրեղ ՏԱԼ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

33. Օրինակեցեք վարի խօսքերն ու ԱՆՑՈՂԱԿԱՆ
ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Գոյրս իր սակեմատանին կորսնցնել տուաւ:
Մարդիկ կան, որոնք կը սիրեն իրենք զիրենք ա-
մէնուէն ճանչցնել, իրիկուէն զասդ պիտի սորվե-
ցնեմ, վերաբովոյ կարել տուր: Դեղդ ո՞վ պիտի
խմցնէ, Այսօր՝ մնացած աշխատանքը լմնցնել տուի:
Աշխէն զլխարկին ձեւը փոխել տուաւ: Եղբայրդ իր
դրամները գողցուց, Մարդիկ կան, որոնց խօսք
հասկցնել չես կրնար:

40. Հետեւեալ ներգործական քայերն անցողա-
կան ըրեք քերականացի:

Սիրել, խմել, երգել, ծեծել, պահել, լուալ,
մաղել, մանել, սորվել, տաղել:

Օրինակ. Սիրցնել:



ԻԳ. Դաս.— Բային համաձայնութիւնը

42. Բայը իր ենթակային հետ ԴԵՄՔՈՎ ՈՒ
ԹՈՒՈՎ կը համաձայնի:

43. Եթե ենթական առաջին դեմք է՝ քայն աշ
առաջին դեմք կը դրուի. նայնպէս ալ եթէ երկրորդ
կամ երրորդ դէմք է. Օրինակ. Ես կը խնդամ, դուն
կը գործես, անոնք կը խնդան (Զ'ըսուիք. ԵՍ կը

խնդ.ԱՍ.

44. Երե եկրական եզակի ե՛ք բայր եզակի կը
կը դրուի, երե յոփնակի ե՛ք յոփնակի: Օրինակ. Իշ-
խանը կը հրամայէ, իշխանները կը հրամայեն,
(Զ'ըսուիր. ԻՇԽԱՆԵ՛՛Լ կը հրամայեն):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

41. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքեր՝ ԲԱՅԵՐՆ
ԵՆԹԱԿԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՀԱՄԱԶԱՅՆՅԵԼՈՎ:

Դուն բարկանալ, Մենք աշխատել, Ան խա-
ղալ: Ես վազել, Դուք իյնալ, Անոնք հաշել, Դուն
յաղթուել: Մենք քնանալ: Վառարանը վառել:
Թռչունը վանդակին մէջ երգել: Աղջիկները առանց
աղմուկի խաղալ: Զինուորը քաջութեամբ պատե-
րազմել: Թնդանօթները սոսկալիօքէն գոռալ:

Օրինակ. Դուն կը քարկանաս:

42. Բերանացի յոփնակի ըրե՛ք հետեւեալ խօսքեր:
Եղբայրդ կը ծխէ: Բարեկամս կը գրէ: Զին կը
խխնջէ: Մանուկը կսւ լայ: Մայրը կը լուար: Ա-
շակերտը պիտի պատժուի: Լո՛ւէ՛: Ոտքի՛ ել: Պտոյտի
զացի: Ուրիշը յարգէ՛: Դասս կը ոտրվիմ: Անիրաւ
չըլլա՛ս:

Օրինակ. Եղբայրներդ կը ծխեն:



ԻԳ. Դաս.— Մակբայ

45. ՄԱԿԲԱՅ կ'ըսուին այն բառերը, որոնք
դործողութեան մը ՏԵՂԸ, ԺԱՄԱՆԱԿԸ, ԿԵՐՊԸ եւ
ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ցոյց կու տան: Օրինակ. ՀՈՍ նըս-
տէ. ՎԱՂԸ եկուր. ԾԱԾՈՒԿ խօսէ: Ո՞ՐԶԱՓ գրեցիր:

46. Դործածական մակբայներն են.

Իճչպես, հազիւ, աստիկ, քունի, շուս, շաս, կա-
ւաց, քնաւ, երբե՛ք, անմիջապես, ո՞ւր, ե՞րբ, միշտ.

աշտօր, վաղը, յառաջ, յետոյ, վար, վեր, ներսը,
դուրսը, ո՞րչափ, ի՞նչ, ա՞յո՛, ո՛չ, եւայլն։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

43. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ՄԱԿԲԱՅ-
ՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ։

Ի՞նչպէս կ'արեցիր այդ մրցանիշը, Հովը սաս-
տիկ կը փչէ, Քիչ բարձիր, չուտ դարձիր։ Երբ նա-
մակս առնուս՝ անմիջապէս ճամբայ ելի։ Ո՞ւր դբիք
մեռածին մարմինը, Ե՞րբ պիտի սորվիս դասերդ։
Այսօր կամ վաղը կը մեկնինք դէպ ի կոնդոն, Յա-
ռա՞ջ կ'երթաք՝ թէ հո կ'երթաք։ Նե՞րսը նստիլ
կը հաճիք թէ դուրսը։

44. Հեկեւեալ կիսերունն սեղ՝ ՄԱԿԲԱՅ ԴՐԷՔ
ԲԵՐՈՆՆՈՅԻ։

Իրիկունը կը պառկինք, . . . կ'ելլենք։ Հի-
մայ փոխ տուր՝ . . . կը վճարեմ։ Կեանքիդ մէջ
սուտ խօսա՞ծ ես . . . : Նկարը պէտք է . . . դի-
տել։ Նաւակով դեաին . . . անցան, կը մեկնի՞ք
թէ . . . կը մնաք։ Վա՞ր կ'իջնանք՝ թէ . . .
կ'ելլենք։



ԻՆ. Դաս.— Նախադրութիւն

47. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ քառ մըն է, որ ԱՆՈՒՆԻ
կամ ԴԵՐԱՆՈՒՆԻ մը՝ իւր քային հետ ունեցած ԿԱ-
ՊԱՅՈՒԹԻՒՆԸ կը ցուցնէ, ՕՐԻՆԱԿ. ԸՆԿԵՐԻՆ ՉԱՓ
ԴԻՄԷՐ. Քեզի ՊԷՍ կը կարդայ։

48. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ հոշովուած քառի
հետ կը գործածուին եւ այդ հոշովուած բառը՝ նա-
խադրութեան հետ ԴԻՐԸ կը կոչուի։

49. Դիտաւոր նախադրութիւններն են.

Համար, հետ, չափ, վրայ, պէս, քով, առանց,

quas, դիւ, առջեւ, ետեւ, մօտ, վերեւ, միջեւ, քաղ,
մեջ, վար, վեր, ի վար, ի վեր, դիպ ի, եւայլն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

45. Օրինակեցիք հետեւեալ խօսքերը եւ նԱԽԱ-
ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Քեզի համար կ'աշխատիմ, մա'յր իմ: Ծնող-
քիս հետ այցելութեան գացի: Դարակիւն վրայ է
գլխարկդ, Տիգրա'ն: Սոխակի պէս կ'երգէ: Ազդ մը
առանց հայրենիքի կ'ապրի՞: Տիգրան Մեծ, Հռոմա-
յեցւոց դէմ կռուեցաւ: Սրտովս քեզի մօտ եմ: Զեռ-
քիդ մէջ ի՞նչ ունիս: Մի՛ ըլլար ուրազի պէս մի՛շտ
դէպ ի քեզ, մի՛շտ դէպ ի քեզ, այլ եղիք սղոցի
պէս՝ մէկ դէպ ի քեզ, մէկ դէպ ի մեզ:

46. Ըսեք թէ յաջորդ բառերէն ո՞րը նԱԽԱ-
ԴՐՈՒԹԻՒՆ եւ ո՞րը ՄԱԿԲԱՅ է 1):

Մօտ, հազիւ, ո՞ւր, միշտ, վերեւ, տակ, յա-
ռաջ, համար, դուրսը, պէս, ո՞րչափ, երբե՛ք, զատ,
դէմ, սաստիկ, քով, վաղը, չափ, չատ, հետ, մէջ,
այո՛, առանց, ո՛չ:



ԻԶ. Դաս. — Շաղկապ

50. ՇԱՂԿԱՊ կ'ըսուին ա'յն բառերը, որոնք
բառ բառի կամ խօսք խօսքի հետ կը կապեն: Օրի-
նակ. Վերոնիկա եւ Մարգարիտ քոյրեր են, Շատ
վաղեց, ԲԱՅՑ չկրցաւ հասնիլ:

1) Նախադրութիւնը գոյականի հետ կը գործա-
ծուի, իսկ մակբայը՝ բայի հետ:

51. Գործածական Շաղկապներն են.

եւ, ու, կաւ, նաւ, աշք, աշ, կա՛ւ. . . կա՛ւ,
քե, քե՛ . . . քե՛, եքե, որ, քայց, սակայն, աշ, քան,
քանք, մանաւանդ, իսկ, որպէս զի, վասն զի, ո-
րովհետեւ, օրինակ, ևն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

47. Գրեցե՛ք վարի խօսքերը եւ ՇԱՂԿԱՊՆԵ-
ՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԵ՛Ք:

Գործնան դաշտ ու հովիտ, լեռ ու բլուր ծա-
ղիկներով կը պճնուին: Վարդեր կը քաղես, սա-
կայն փուշերէն պիտի խայթուիս: Առած է. էշն
ի՞նչ գիտէ թէ նուշն ի՞նչ է: Պատերազմի դացողը՝
կա՛մ պիտի յաղթէ, կա՛մ պիտի յաղթուի: Ա՛յնքան
շփոթեցաւ որ գիտցածն ալ մոռցաւ: Տեսէ՞ք սա
դուարթ մարդը. թէ՛ կ'երգէ թէ՛ կը պատմէ:

48. Ըսե՛ք քե հետեւեալ բառերէն որո՞նք ՇԱՂ-
ԿԱՊ եւ որո՞նք ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ են.

Բայց, հետ, եթէ, վրայ, ու, մէջ, որովհետեւ,
եւ, քով, դէմ, մօտ, նաեւ, առջեւ, ալ, պէս, զատ:



Ի՛է. Դաս.— Ձայնարկութիւն

52. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ կամ ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ կը
կոչուին ա՛յն բառերը, որոնք տասնի տասնի զգա-
ծուսներ կը յայտնեն. այսինքն՝ ԲԱՂՁԱՆՔ, ՁԴՁՈՒՄ,
ՑԱԻ, ՎԱԽ, ՁԱՐՄԱՆՔ, ՕՐԻՆԱԿ. Ո՛ր, ի՞նչ գեղե-
ցիկ բան է համերաշխութիւնը. Մե՛ղք. որ չատ ուշ
հասկցանք ասիկա. ԵՐԱՆԻ՛ թէ կանուխէն ըմբռնած-
ըլլայինք:

53. Գործածական ձայնարկութիւններն են.

Ո՛հ, վա՛խ, աւա՛ղ, երաւի՛ք քե, իցիւ՛ք քե, վա՛յ,
մե՛ղք, ափսո՛ս, ա՛խ, քա՛քե, ա՛հ, ա՛յ, վա՛շ, օ՛հ,

կեցցե՛ս, ապրի՛ս, վա՛խ վա՛խ, ա՛յ ա՛յ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

49. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերն ու ՁԱՅ-
ՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Երանի՛ թէ երբեք սուա խօսած չըլլայիր: Ա-
ւա՛ղ, ո՛րքան ժամանակ կորսնցուցի: Վա՛խ, տա-
նիքէն ինկեր մեռեր է: Իցիւ՛ թէ անգամ մըն ալ
չպատահէր այդպիսի բան: Վա՛յ այն ժողովուրդին,
որ գլուխ ու կառավարութիւն չունի: Սղամանդա-
զարդ մատանին զողցնել տուեր է, մե՛ղք: Ա՛խ, ե՞րբ
հայրենիքս տեսնելու ուրախութիւնը պիտի ունե-
նամ: Օ՛հ, յառա՛ջ շարժեցէք: Կեցցե՛ն հայրենիքին
համար կռուողները:

50. Բերանացի մէյ մէկ խօսք շինեցե՛ք յաջորդ
մայնարկութիւններով:

Ափսո՛ս, ո՛հ, ա՛հ, ապրի՛ս, վա՛յ, վա՛խ, ա՛յ,
ողջո՛յն:

Օրինակ. Սիրեղի հայրենիք, ողջո՛յն քեզ:



ԻԸ. Դաս. — Կիսադրութիւն

54. Խօսքի մը զանազան մասերն իրարմէ դա-
տելու համար այլեւայլ նշաններ կը գործածենք,
որոնք ԿԷՏ կը կոչուին և անոնց գործածութեան ալ
ԿԻՏԱԴՐՈՒԹԻՒՆ կ'ըսենք:

55. ԿԻՏԱԴՐՈՒԹԵԱՆ գլխաւոր նշաններն են.
1. ԲՈՒԹ ('), 2. ՍՏՈՐԱԿԷՏ (,), 3. ՄԻՋԱԿԷՏ (.),
4. ՎԵՐՋԱԿԷՏ (:) :

56. ԲՈՒԹԸ (') կը ցուցնէ թէ շատ քիչ կանգ
առնուու է: Օրինակ. Բարիք ընողը՝ չարիքի սպասէ:

57. ՍՏՈՐԱԿԷՏԸ (,) ամբողջ խօսքի մը կարճ
նախադասութիւնները իրարմէ կը դառնէ եւ մի-

եւնոյն կարգի բառերը իրարմէ կ'անջատէ: Օրինակ. Արագած, Սիփան, Վարագ, Գրգուռ հայկական շեններ են:

58. ՄԻՋԱԿԷՏ կամ ԿԷՏ (.) կը գնենք սառակէտէն քիչ մը աւելի շունչ առնլու եւ ուրիշին խօսքն յառաջ բերելու ատեն: Օրինակ. Խոււրիկ սառնոցնորդն ըսաւ. քեռները շաւ մը կ'սպած՝ կ'առֆերուն վրայ բարձեֆ. ամեն մէկ կ'առֆին մէյմէկ զինեալ պահապան որեֆ ու ճամբայ եղեֆ:

59. ՎԵՐՋԱԿԷՏ (.) կը գրուի խօսքի մը վերջը կատարեալ հանդիսա առնլու համար, Օրինակ. Այսպէս որոշեցին ու ճամբայ եղան:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

51. Գրեցեֆ վարի խօսքերը եւ ԻՄԱՍՏԻՆ ՀԱՄԵՄԱՏ ԿԷՏԵՐԸ ԴՐԷՔ:

Բաֆֆի հայ նշանաւոր վիպագիր մըն է Ռուբէն Զարդարեան մշակուած գեղեցիկ լեզու մը գործածած է իր գրութիւններուն մէջ Հ Գաթըրճեանի կը պարտինք ոսկեգարեան հայ լեզուի գիւտը Կեսար Հոովմայեցւոց զօրավարը Թշնամիներուն վրայ արագ յաղթանակէ մը յետոյ սա համառօտ նամակը գրեց ծերակոյտին եկայ տեսայ յաղթեցի Դեռ շատ բան ունէի ըսելիք

Օրինակ. Բաֆֆի՝ հայ նշանաւոր վիպագիր է:

52. Բերանացի մէյ մէկ խօսք ըսեֆ, որունց մէջ ԲՈՒԹ, ՍՏՈՐԱԿԷՏ եւ ՎԵՐՋԱԿԷՏ գտնուի:



ԻԹ. ԴԱՍ. — Ստորոգելի

60. Անուն մը, Դերանուն մը կամ Ածական մը, որ էական բային հետ կը գործածուի կամ անոր կը վերաբերի՝ ՍՏՈՐՈԳԵԼԻ կը կոչուի: Օրինակ. Բա.

զէն քոչուն է: Այդ գիրքն իմս է: Մեղուն աշխատահր է:

61. Ստորոգելին ենթակային ինչ կամ ինչպիսիք ըլլալը կը ցուցնէ եւ ի՞նչ կամ ի՞նչպիսի հարցումով կը գտնուի:

62. Ստորոգելին սովորաբար ուղղական հոդով կ'ըլլայ եւ եզակի կը մնայ: Օրինակ. Զին ու Զորին գրաս են. իյս կեռասները խակ են:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ


53. Օրինակեցիք հետեւեալ խօսքերն ու ՍՏՈՐՈ-ԳԵԼԻՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Առիւծը վեհանձն է: Հայաստանի հողը բերրի է: Գազիկ թագաւոր էր: Նղբայրդ բժիշկ պիտի ըլլայ: Ս. Գրիգոր մեր ազգին Լուսաւորիչն է: Դարեջուրը հին Հայերուն ծանօթ էր: Աղձնիք հայկական նաւանդ էր: Յովհաննէս Թումանեան՝ սիրուած բանաստեղծ է: Ծնողքիդ անդրանիկ զաւակը դո՞ւն ես: Այս գրիչը քուկդ է:

54. Հետեւեալ ենթականերուն մէջ մեկ ՍՏՈՐՈ-ԳԵԼԻ դրեք բերանացի:

Վարդը ծաղիկներուն . . . է: Արծաթին դոյնը . . . է: Նկեղեցին . . . է: Նթէ ուղիս՝ կրնաս . . . ըլլալ: Վարդ այս ժամուն . . . պիտի ըլլամ: Հայաստան մեր . . . է: Ծաղիկին հոտը ամէնուն . . . է: Այալներան, աշխարհաբար քերականութեան մեծ հեղինակը, վիեննական Միլիթարեանց . . . էր:

Օրինակ. Վարդը ծաղիկներուն քաղուհին է:



Լ. Դաս. — Յատկացուցիչ Յատկացեալ

63. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ Կը կոչուի այն սեռական հոշոյիլը, որ բանի մը որո՞ւն ըրալը կը ցուցնէ. Օրինակ. Թագաւորին թագը. Դրան բանալին. Աշխարհի ունայնութիւնները:

64. Խօսքի մէջ յատկացուցիչը կը գտնուի որո՞ւն կամ ի՞նչ բանին հարցումով: Օրինակ. Կարպիսին գրեւոր. որո՞ւն գրեւորը — Կարպիսին (յատկացուցիչ): Ծաղիկին գոյնը. ի՞նչ բանին գոյնը — ծաղիկին (յատկացուցիչ):

65. Յատկացուցիչին վերաբերած անունը ՅԱՏԿԱՑԵԱԼ կը կոչուի: Օրինակ. Իշխանին քաղը. Թռչնոյ բոյնը:

66. Յատկացեալը ամէն հոլով կրնայ ըլլալ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

55. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Ծովուն ջուրը աղի է. Թագուհւոյն թագը գեղեցիկ է. Մարդուն կեանքը կարճատեւ է: Պատուհանին ապակին թափանցիկ է. Տէրութեան օրէնքները խիստ են: Մեր տունը բարձունքի վրայ է. Ագահին սիրտը հարստութեամբ չի յագեցնար: Կատուին խաղը՝ մուկին մահ է. Արջուին կտուցը կոտմընկէն է. Աւարայրի դաշտը՝ հայ քաջերու արիւնով ներկուած է. Հայ Արշակունեաց դրամները յունարէն գրով գրուած էին: Կտորածիռէ թագուհւոյն գրեւ տուած աւետարանը՝ ամենա՛ինն է:

56. Բերանացի մեյ մեկ յարմար յատկացուցիչ գտե՛ք հետեւեալ յատկացեալներուն:

Բոյնը, գոյնը, թոյնը, ձագը, կարագը, մարագը, մատը, թաթը, գաղաթը, բուքը, շուքը, թուքը, սուքը, գետը, նետը, պետը, խոտը, կոթը, հօտը, աղօթքը:

Օրինակ. Սոխակին բոյնը:

ԼԱ. ԴԱՍ. — Բայեռուն խնդիրը — սեռի խնդիր

67. ԽՆԴԻՐԸ՝ բային իմաստը կը լրացնէ: Օրինակ. անորոշ է երբոր ըսեմ՝ կ'ոչեւ (որովհետեւ ուշեղ բայը հոս խնդիր չունի). որոշ է, երբոր ըսեմ՝ հաց կ'ուտեմ (հաց՝ ուտել բային խնդիրն է և անոր իմաստը կը լրացնէ):

68. Երկու տեսակ խնդիր կայ. Սեռի ԽՆԴԻՐ և ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ:

69. Սեռի ԽՆԴԻՐ. — Սեռի ԽՆԴԻՐԸ հայցական հոշով կ'ըլլայ եւ զո՞վ կամ ի՞նչ բանը հարցումով կը դառնուի: Օրինակ. Ընկերս կը սիրեմ. զո՞վ կը սիրեմ -- ընկերս (հայցական հոշով և սեռի խնդիր). Գրիչս կոտրեցի. ի՞նչ բանը կոտրեցի -- գրիչս:

70. Խնդիր սեռի կ'առնուն ներգործական բայեր:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

57. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ Սեռի ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Հայրենիքս կը սիրեմ: Գիտնական մարդիկը կը յարգենք: Գետը մեր արտերը կ'ողողէ: Ոստիկանը քաղաքը պիտի պահպանէ: Եթէ իշխան ես՝ պէտք ես երկիրդ լաւ կառավարել: Ուսուցիչը ծոյլ ու հար աշակերտը կը պատժէ: Մեղուն ծաղիկներուն հիւթերը կը ծծէ և անոնցմով մեղը կը պատրաստէ: Գիտե՞ս թէ ո՞ր զօրավարը կործանեց Կարգեղանը: Ծնողքդ պատուէ՛ երկար պիտի ապրիս:

58. Յաջորդ բայերուն յարմար Սեռի ԽՆԴԻՐ գտե՛ք քերականցի:

Փայտահատը անտառէն քսան . . . կարեց: Կօչակարը քեզի զոյգ մը . . . պիտի կարէ: Բոյրս . . . կը նուազէ, եղբայրս ալ . . . : Օրը քսանուչորս . . . ունի կովը, ոչխարն ու այծը մեզի . . . կու տան: Զապէլ իւր . . . կը սիրէ և . . . կը յարգէ: Վարուժան երէկ իւր . . . լաւ սորված

եւ ուսուցիչէն . . . ընդունած էր: Ինչպէս
. . . կորսնցուցի:



ԼԲ. Դաս.— Բնութեան խնդիր

71. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ կը կոչուին ընդհանրապէս Տրական, Բացառական եւ Գործիական հոլովները: Օրինակ. Զիռն խոտ անի. Պատահանէն ցաակեց. Ուրագով կը ապչեն:

72. Բնութեան խնդիրը կը գտնուի որո՞ւն կամ ի՞նչ բանի (տրական հոլով), որով՞ կամ ի՞նչ բանէն (բացառական հոլով), և որո՞ւ կամ ի՞նչ բանիս (գործիական հոլով) հարցումներով:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

59. Գրեցե՛ք յաջորդ խօսքերը եւ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Ուսուցիչը Սեդրակին բարենիչ մը առաւ: Փոքրերը մեծերուն կը նային եւ անոնցմէ օրինակ կ'առնուն: Բարիները՝ իրենց օրինակով քարոզ կու տան չարերուն: Այս կերպսը ձեզմէ գնած եմ: Խարբալով ջուր մի՛ կրեր, կ'ըսէ՝ չայ ժողովրդական առածը: Դռնէն կը վռնտես՝ պատուհանէն ներս կու գայ: Հպարտը՝ ինքնիրմով լեցուած է: Խոսքովին՝ Տրդատ յաջորդեց: Կաթէն բամպակ չինել սորվեցուց պատերազմը: Հայրենիքը ձեզմով պիտի պարծենայ:

60. Վարի հարցումներուն տեղ յարմար ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ դրե՛ք քերականցի:

Լաւ աշակերտը (ի՞նչ բանի) ուշադիր կ'ըլլայ: Զուկը (ուսկի՞ց) կը հոտի: Վառարանը (ինչո՞վ) կը վառի: Կաթը (որմէ՞) կը կթեն: Խոտը (ինչո՞վ) կը հնձեն: Բարենիչը (որո՞ւն, կու տան: Ծառերը (ինչ-

չո՞վ) կը զարդարուին: Ծոյլ աշակերտը (որմէ՞) կը
վախնայ: Դեղը (որո՞ւն) օգտակար է: Զինուորը
(ինչո՞վ) կը կռուի:



ՎԵՐՋ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0013062

ЦЕНА

11

13106